ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ>> ՍՈՑԻԱԼ-
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԽՈՒՄԲ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ «ԾԱՆՈԹ ԵՎ ԱՆԾԱՆՈԹ ԱՅՎԱԶՅԱՆԸ»

ՀԵՏԱԶՈՏՈՂ՝ ԱՆԱՀԻՏ ԱԿՈՒՆՑ

ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԵԼԼԻ ՂՈՒՇՈՒՆՑ

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 2

Մեր Այվազյանը ---------- 5

Ասուրը ---------- 8

Կարոտների միջով ---------- 11

Գրողը և նրա հերոսները ---------- 13

Կտակ ---------- 15

Երևակայական հանդիպում՝ <<Կա և հետմահու կյանք>> ---------- 16

Եզրակացություն ---------- 23

Օգտագործված գրականության ցանկ ---------- 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Թե հնար լիներ, արևի շողերից փնջեր կկապեի ձեզ համար, որ ձեր ճանապարհը լուսավոր լիներ: Թե հնար լիներ, սիրտս կհանեի տեղից և ջահի պես կվառեի ձեր վերելքի ճանապարհին: Ես պատրաստ եմ դեպի դրախտ տանող ձեր սանդուղքի մի աստիճանը դառնալու: Միայն թե հնար լիներ…»: Ս. ԱՅՎԱԶՅԱՆ

Անհնար է պատկերացնել հայ արձակագիր Սուրեն Այվազյանի մարդասիրությունն ու անապակ հոգու ողջ խորությունը: Ինձ թվում է՝ Այվազյան-գրողի մասին քիչ է խոսվել և ըստ արժանվույն գնահատվել: Երևի մի գեղեցիկ օր մեր հանրության ու ընթերցասեր հասարակության ուշադրությունը ավելի կսևեռվի այս համեստ ու հանճարեղ գրողի վրա, սակայն իմ նպատակը Այվազյանին որպես զանգեզուրցի և որպես խնձորեսկցի ներկայացնելն է: Մեծատաղանդ գրողը ծնվել է Սյունիքի Խնձորեսկ գյուղում: Սա մի գյուղ է, որ ծվարած է հսկա մի ձորի երկու փեշերին. ձորով հոսում է փոքրիկ մի գետակ և աղմուկով լցնում անձեռակերտ հրաշք անդունդը… Այս չքնաղ բնաշխարհը ոգեշնչել է գրողին, լիցքավորել հոգնած պահերին, ներշնչել բարություն , ազնվություն , սեր…

Ես ևս, լինելով խնձորեսկցի, պատիվ ունենալով Սուրեն Այվազյանի համագյուղացին լինելու, ինձ պարտավորված եմ զգում՝ խոսելու այս մեծ հումանիստի, բնապաշտի ու հայրենապաշտի մասին. նրա գողտրիկ տողերի ակունքը իմ ծննդավայրն է:

Այդ առիթով ես մի փոքր ուսումնասիրություն կատարեցի՝ փորձելով հասկանալ Այվազյան-երևույթին: Հավաքեցի նյութեր, հանդիպեցի հարազատների հետ (ի դեպ, եղբորորդին՝ Վանիկ Այվազյանը, իմ հարևանն է) , կապ հաստատեցի ՌԴ-ում բնակվող որդու՝ Ավիկ Այվազյանի հետ(ցավով իմացա,որ նա վերջերս վախճանվել է) ,աշակերտների մի փոքրիկ խմբով կազմակերպեցի այգու և գրողի գերեզմանի շրջակայքի մաքրման աշխատանքները: Սակայն ցավով ասեմ, որ տուն- թանգարանը ողբալի վիճակում է և պահանջում է պատկան մարմինների ուշադրությունը: Սակայն այս փոքրիկ ուշադրությունը շատ քիչ է նման մարդուն և գրողին ճանաչել տալու համար: Ես առաջարկում եմ դպրոցական ծրագրում ընդգրկել նրա լավագույն էջերից, թեկուզ նրա անունը հիշատակել՝ որպես հայ արձակագրի, նշել երկերի վերնագրեր… Ի դեպ, դրանք շատ խոսուն են՝ «Տուր ձեռքդ, կյանք», «Ասուր, հեյ

Ասուր», «Կա և հետմահու կյանք», «Անավարտ գորգը», «Գարունս ձյուների տակ»…Իսկ «Ճակատագիրն հայոց» պատմավեպի մասին պետք է առանձնահատուկ խոսել:

Ես այս աշխատանքով փորձել եմ ներկայացնել իմ ճանաչած Այվազյանին, մի փոքր անդրադառնալ նրա կյանքին և տեսնել նրան՝ որպես Զանգեզուր աշխարհի զավակ, հասկանալ նրա կերտած հերոսներին…

Ես հաճախ եմ հայրենասիրական դասեր անցկացնում նրա այգում՝ տապանաքարի մոտ:

Հետազոտական աշխատանքս ավարտել եմ իմ անցկացրած դաս-միջոցառումներից մեկի սցենարով, որը երևակայական հանդիպում է Սյունյաց նշանավոր այրերի հետ: Այն կոչել եմ Այվազյանի երկերից մեկի վերնագրով՝ «Կա և հետմահու կյանք»: Սյունյաց մեծերը հավաքվել են Սուրեն Այվազյանի այգում և «հիշում» ու «կարոտում» են իրենց բնաշխարհը:Կարմիր թելը բնաշխարհի և նրա մարդկանց հանդեպ սերն է:

Իմ նպատակն է, որ սերունդը ճանաչի Այվազյան-գրողին և մարդուն, վարակվի նրա մարդասիրությամբ, հայրենասիրությամբ, բնապաշտությամբ: Զգա հողի ուժը, ամուր կապվի արմատներին, որդիական սիրով սիրի հայրենիքը, ինչպես սիրել է Այվազյանը:

- ՈՒր էլ մեռնեմ աշխարհում, ինձ կթաղե'ք Զանգեզուրում…,- կտակել է գրողը:

Մենք նրանից սովորելու բան ունենք հաստատ:

Այս ամենը, կարծում եմ , շատ արդիական է, քանի որ հենց Սյունիքն է այսօր թշնամու թիրախը,ուստի մեր վերջնարդյունքը պիտի լինի կարողունակություններով օժտված ճկուն սերունդը՝բարձր արժեքային համակարգով և քաղաքացիական դիրքորոշմամբ:

Աշխատանքը կազմված է հետևյալ մասերից.

1. ***Մեր Այվազյանը*** : Այստեղ փորձել ենք գտնել գրողի ստեղծագործական ակունքներն ու ներշնչանքը:
2. ***Ասուրը*** : Այս բաժնում պատառիկներ են գրողի մանկությունից և պատանեկությունից, որտեղ կերտվել է նրա պարզ ու բարի հոգին:
3. ***Կարոտների միջով***: Այս բաժնում ռազմաճակատային դրվագներ են ու կարոտների միջով կոփված հայրենասիրությունը:
4. ***Գրողը և նրա հերոսները*** : Այս բաժնում անդրադարձել ենք նրա պարզ ու անկեղծ հերոսներին:

5. ***Կտակ*** : Սա գրողի ստեղծագործությունների գագաթն է ըստ մեզ,որտեղ խտացված է նրա անբացատրելի հայրենասիրությունը:

6. ***Երևակայական հանդիպում՝ «Կա և հետմահու կյանք»*** : Սա մեր երևակայական գրական ցերեկույթն է գրողի այգում՝ սյունյաց այրերի մասնակցությամբ:

ՄԵՐ ԱՅՎԱԶՅԱՆԸ

Երևի մարդ մի ամբողջ կյանք պիտի ապրի, որ հասկանա, թե ինչ է հայրենիքը, իսկական հայրենիքը, որի մեջ ու որի միջոցով ապրում է մարդը: Բայց ինչ էլ լինի, հայրենիքը նախ և առաջ հայրենասիրություն է: Առանց հայրենասիրության հայրենիք լինել չի կարող: Հայրենասիրությունը հայրենիքի նկատմամբ ունեցած սերն է և այդ սիրուց ծնված նվիրվածությունը: Այդ սիրո ու նվիրվածության սահմանները ճանաչելը անհնար է: Դա անիմանալի, անբացատրելի, հզոր, բնատուր և մշտաբորբոք զգացում է, որ ի սկզբանե գոյություն ունի մարդու արյան մեջ: Հայրենիքը ծովի նման է. ափին կանգնում ես, ծայրը չես տեսնում: Ինչպես ծովը, այնպես էլ հայրենիքը, սակայն, ունեն իրենց ափերն ու սահմանները: Ինչպես աշխարհում ամեն բան, հայրենիքն էլ ինչ-որ տեղից սկսվում է, ինչ- որ տեղ ավարտվում: Հայրենիքն առաջին հերթին այն տեղն է, որտեղ ծնվել է մարդ արարածը: Ինչպիսի հզոր զգացմունք էլ ունենա մարդը,, միևնույն է, ամենամաքուր ու ամենաանկեղծ զգացումն ունենում է իր ծննդավայրի նկատմամբ: Հայրենիքն իր հող ու ջրին կառչած հյաստաբուն ճյուղատարած ծառի է նման: Եվ այդ ծառը որքան սաղարթախիտ լինի, միևնույն է, նրա սկիզբն ընդամենը մի ծիլ է եղել, փոքրիկ մի ծիլ, որ օրեր հետո աճել, արմատներ է հանել, ճանաչել իր մայր հողը, սնունդ առել նրանից և հետո դարձել հսկա ծառ: Ծիլը ծննդավայրն է: Այդպես է եղել աշխարհի բոլոր մեծերի հետ: Նրանցից յուրաքանչյուրը իր մեծ հայրենիքինը լինելուց առաջ պատկանել է ծննդավայրին: Նրանք բոլորն էլ սկսվել են այն հողից, որի վրա ապրել են իրենց նախնիները: Հայրենի բնության այն անկրկնելի պատկերներից են սկսվել նրանք, որտեղից ծագել են իրանց հոգու առաջին լուսաբացները:

Լոռին ծնել է **Թումանյան**, **Շիրակը՝ Իսահակյան, Զանգեզուրը՝ Բակունց**: Երազանքների ու վերթևումների օրրան է եղել Գորիսը Բակունցի համար: Գորիսն ու Բակունցը դարձել են հոմանիշներ: Բակունցը Գորիսն է, Գորիսը՝ Բակունցը: Սյունիք-Զանգեզուրի ստեղծագործական արգանդը շատ մեծություններ է տվել հայ ժողովրդին: Ինքնատիպ, անկրկնելի, համահայկական մեծություններ, որոնք ամենից առաջ դարձել են Զանգեզուր աշխարհի հպարտությունը: **Գորիսը՝ Բակունց, Խանզադյան, Սիսիանը՝ Սահյան, Խնձորեսկը՝ Այվազյան, Սևունց:**

Մեծատաղանդ արձակագիր Սուրեն Այվազյանը Զանգեզուր աշխարհի հերթական մեծություններից է: Հողը, ուր ծնվել է Այվազյանը, կոչվում է Հայաստան, միջավայրը, որի ստեղծագործական հարթակից սկսվել է նրա պառնասյան թռիչքը, կոչվում է Զանգեզուր, ծննդավայրը, որից ծլարձակվել է նրա գրողական տաղանդը, կոչվում է Խնձորեսկ: Խնձորեսկում է անցել ապագա գրողի մանկությունը: Այստեղ նա աչք է բացել, այստեղ ականջալուր եղել գյուղի քաջաց պատմություններին: Զանգեզուր աշխարհի բնությունը և այդ բնության մեջ ապրող մարդիկ են անվերջ ոգեշնչել նրան: Խնձորեսկն է եղել նրա կենարար երակը:Խնձորեսկի քերծերն են նրան սովորեցրել այդքան բարձր ու կարծր լինել: Խնձորեսկի ձորերն են սովորեցրել նրան այդքան խոր ու խորունկ լինել:Խնձորեսկի սարերն են նրան սովորեցրել այդքան վեհ ու հպարտ լինել:

«Ուրի՛շ են մեր քերծերը»,-գրում է խնձորեսկցի մի ուրիշ արձակագիր՝ Արկադի Ծատուրյանը:

Այվազյան գրողի ստեղծագործական ներկապնակի ամենավառ գույներն են եղել **Սարգիս Պետրոսյան- Ուսուբօղլին, Լուռ Լալազարը**, խնձորեսկցի դարբինները, զինագործները, բրուտագործները, աղբյուրաշեններն ու խաչքարագործները ու մաճկալ – հողագործները: Իսկ մեծ գրողի անհանգիստ հոգու և թափառ մտքերի տիրակալները եղել են **Իսրայել Օրին, Խաչատուր Աբովյանը, Սայաթ-Նովան, լոռվա Հովհաննեսը…** Այվազյանը սկսվել է Զանգեզուրից, ապրել աշխարհի հոգսերով ու ավարտվել Զանգեզուրով: Այվազյանն աշխարհի բոլոր ցավերն անցկացրել է զանգեզուրցու ցավի միջով և գտել մարդկային կերավորումների իր տեսակը՝ զանգեզուրցու տեսակը: Աշխարհում բարի ու բարեպաշտ մարդիկ շատ են եղել, բայց Այվազյանն ամենաբարի, բարեպաշտ մարդկանց կերպարները գտել է Խնձորեսկում: Հողաբույր մարդիկ են դրանք, իրենց նախնիների հերոսական կերպարանքներով, քարի ու հողի հետ կռիվ տվող, աշխարհի լավն ու բարին հոգում ամբարած, իրենց լեռների պես ամուր ու արևահամ մարդիկ: Ստեղծագործական ճախրանքների վսեմ պահերին Այվազյանի հոգու հենարաններն են եղել Զանգեզուրի ու Ղարաբաղի հորովելները:

Հին Խնձորեսկը, որ հիմա ձոր ու ժայռերով պարուրված մի խառնափնթոր համայնապատկեր է, ժամանակին տասներկու բանուկ ու մարդաշատ թաղամասեր է ունեցել: Ժայռեղեն պատնեշներով ու խոր ձորերով իրարից բաժանված այդ թաղամասերն առանձին-առանձին ունեցել են իրենց անունները: Թաղերից ամենամեծը «Վերին թաղ» է կոչվել, որը

գտնվել է գյուղի կենտրոնում: «Վերին թաղից» ավելի վեր ապառաժներով ու քարակարկառներով կտրտված մի թաղ է եղել, որ կոչվել է «Սպիտակ թաղ» կամ «Աղի մահլա»: Այս թաղի տները մեկը մյուսի վրա դասավորված էին սպիտակ զանգված մի ժայռաստանի զառիթափ լանջին՝ աղահանք հիշեցնող ճերմակագույն լեռնատարածքում: Այդ պատճառով էլ աշխարհի իրենց քարանկյունը մարդիկ կոչել են «Սպիտակ թաղ»: Թաղերից յուրաքնաչյուրն ուներ իր հպարտությունը: Թաղային ներքին մրցակցության մեջ «Սպիտակ թաղն» աչքի էր ընկնում իր երգիչ-բանաստեղծներով, իր սազանդար-նվագողներով, գրող-արվեստագետներով: «Հենց այստեղ՝ **«Սպիտակ թաղի»** բարձունքի վրա, իրար հարևանությամբ էին ապրում **Սազանդարանց Տիգրանը, Սաթունց Մոսին, Իվազաց Բախշին:** Եվ ով իմանար, որ խնձորեսկցի այս տաղանդավոր օջախների տաղանդավոր զավակները մեծանալու են և իրենց աստվածատուր շնորհներով աշխարհ են զարմացնելու: **Տիգրանի** դուստր **Տաթևիկը** դառնալու է հայ երգի թագուհիներից մեկը, **Մոսու Աշոտ** և **Արամ** որդիներն իրենց քաղցրանուշ մեղեդիներով երաժշտական բարձունքներ են նվաճելու, իսկ վաղամեռիկ **Բախշու** որդին՝ **Սուրեն-Ասուրը**, նշանավոր գրող է դառնալու՝ ձեռնոց նետելով Ներքին թրղեցի **Կուքանաց Սևու որդի Գարեգին Սևունցին»**,- հիշում է **արձակագիր Արկադի Ծատուրյանը:**

ԱՍՈՒՐԸ

Եվ այսպես, 100 տարի առաջ՝ 1915 թվականին, Խնձորեսկի հնագույն օջախներից մեկում՝ հողագործ Բախշի Այվազյանի ընտանեկան հարկի տակ, ծնվեց Սուրեն Այվազյանը: Հայր Բախշին շատ ուրախացավ: Անչափ ուրախացավ նաև ավագ եղբայր Սերգոն: Հայրը խանդաղատանքով նայեց նորածնին , համբուրեց նրա փափլիկ թաթիկներն ու տոտիկները, հիացավ նրա լուսաճաճանչ աչիկներով ու ճերմակաթույր ճակատով և աշխարհից գոհ ու երջանիկ բացականչեց.

- Բոխճա՛, մեր երեխան աստվածատուր է:

Ասուր հրաշամանուկը հոգատար, փաղաքուշ ձեռքերում մեծացավ: Սիրագորով մայր Բոխչան բազում անքուն գիշերներ լուսացրեց իր Ասուր որդու օրոցքի մոտ: Սուրեն մանուկը, անտեղյակ ամեն ինչից , մեծանում էր մոր անսահման գուրգուրանքի ու սիրո երազների մեջ: Սակայն հայր Բախշուն վիճակված չէր վայելելու իր հրաշամանուկ որդու երջանիկ ներկայությունը: Իր գոյության կես ճանապարհին հրաժեշտ տվեց կյանիքն՝ իր զավակներին ապրեցնելու հույսը թողնելով մայր Բոխճայի վրա: Ընտանիքի աշխատող ձեռքը կորցրած մայրը իր ավագ որդի Սերգոյին 12 տարեկանում ուղարկեց տավարը պահելու, իսկ ինքը գնաց հարուստի տներում հաց թխելու և լվացք անելու, որ գոնե կրտսեր որդուն դպրոց ուղարկի, գրագետ մարդ դառնա:

Ուրիշների համար կալ կալսող, ուրիշների հանմար գորգ գործող, հաց թխող ու լվացք անող մայր Բոխչան հաճախ էր գնում հեռու այգիները՝ ուրիշների համար գործ անելու: Հաճախ նա իր որդուն՝ Ասուրին էլ էր հետը տանում: Մայրը փխրեցնում, փափկացնում էր ծառերի տակը, հեռացնում մոլախոտ ու մացառ, ջրում ծառ ու թուփ, իսկ Ասուրը մեջքի վրա կանաչների մեջ պառկում էր ու նայում կապույտ երկնքին:

« Ինձ թվում էր, թե երկնքի կամարը աշխարհի վրա համատարած փռված մի գորգ է, որի ծոպը գնում –ագուցվում է հեռավոր լեռների ու սարերի գագաթներին: Ինչպես երկնային գորգի, այգու վերջն էլ չէր երևում: Շուրջս՝ վերև ու ներքև, կանաչազգեստ ծառեր են: Ձորն ի վար ու ձորն ի վեր, ուր աչքդ կտրի, ծառեր են ու ծառեր: Աշխարհը վերևում կապույտ էր, ներքևում՝ կանաչ, և մայրս էլ՝ այդ կանաչ աշխարհի թագուհին: Իսկ այդ կանաչ ու սքանչելի թագավորության դրախտային բնակիչները թռչուններն էին, որ իրենց հայտնի լեզվով կանչում են իրար, խումբ-խումբ մտնում սաղարթների տակ ու սկսում իրենց զվարթ ու

դյութական համերգը: Ունկերս լցվում էին բնության չքնաղ ձայներով: Թռչունների քաղցրահնչյուն դայլայլները կախարդիչ զորությամբ թովում էին հոգիս և, ինձ թվում էր, թե այդ ախորժալուր վեհությունը գալիս- անցնում էր իմ մանուկ սրտի միջով: Այդ պահերին ինքս էլ էի ցանկանում թևավոր լինել, գնալ, ճախրել երկնային հավքերի հետ ու երգել նրանց նման»,-կարդում ենք Այվազյանի հուշերում:

Եվ այսպես, հայրենի հավքերի երգը սրտում, ծննդավայրի վեհատեսիլ բնության հմայքները խորունկ աչքերում, հայրենի հանդ ու դաշտից հասկ հավաքելով, չար մարդկանց անտարբեր զորությունից նեղվելով, իր սիրասուն մայրիկի տաքուկ փեշի տակ, որբի թշվառ ճակատագրով՝ մեծանում էր ապագա արձակագիրը, որ հետո պիտի հիշեր.

«Երջանիկ չեն եղել իմ ծնողները, որ չեն հիշել իմ ծննդյան թվականը: Իմ ծնունդը նրանց համար դժբախտություն է եղել: Հայրս շուտ է մեռել և կիսած տառապանքի իր բաժինն էլ թողել է մորս»: Այնուհետև մոր ձայնը միշտ ունկերում էր.

-Ասու՛ր, հե՛յ Ասուր… Ասու՛ր, հե՛յ Ասուր…

-Հա՛, նանի՛, մտքով էի ընկել… Ասում եմ՝ թևավոր լինեի, գնայի, ճախրեի հավքերի հետ ու նրանց նման երգեի…

- Է, բալա՛, քոռանամ ես… Դու որ ծնվեցիր, մեծ կոտորած էր, առուն արցունք էր, առուն արյուն էր…

-Եվ դա էլ իմ ծննդյան վկայականն է…

- Որդի՛ս, ճիշտ է, ես գրել կարդալ չգիտեմ, բայց ուզում եմ, որ դու ուսում առնես, մեծ մարդ դառնաս, չար չնայես էս աշխարհին… Պետք է սիրել մարդկանց, որդի՛ս, բարին ջրի պես բան է. կարող է քարը փափկացնի, դու բարի՛ եղիր: Որդի՛ս, Ասու՛ր… Գնա՛, գնա՛ քաղաք, ուսու՛մ առ… Քոռանամ ես, հայրդ ասում էր՝ էս էրեխեն աստվածատուր է, երանի՛ ողջ լիներ, քեզ մեծ մարդ դարձած տեսներ:

Ասուրը ոտաբոբիկ ու կիսաքաղց գնաց դպրոց և դարձավ դպրոցի առաջավոր աշակերտներից մեկը: Ուսուցիչ ընկեր Բագրատ Ղարագյոզյանը գոհ էր իր տաղանդավոր սանից: Նա չէր սիրում ծույլ և անբան աշակերտներին: նա այդպիսիններին պատժում էր, բայց ո՛չ ուրիշ վարժապետների նման: Դաս չսովորած աշակերտը, որպես պատիժ կա՛մ պիտի պարեր, կա՛մ երգեր, կա՛մ արտասաներ: Աշակերտներից երկուսը՝ Սազանդարյան Տաթևիկը և Այվազյան Սուրենը, արժանանում են ուսուցիչ Բագրատի հատուկ ուշադրությանը: Տաթևիկը հիանալի երգում էր, իսկ Սուրենն արտասանում էր բանաստեղծ-պատմիչ Սարգիս

Պետրոսյան- Ուսուբօղլու և Թառայունու ոտանավորները: Ուսուցիչ Բագրատը ամեն օր լսում էր մեկի սքանչելի երգը, մյուսի ախորժալուր արտասանությունը: Իր տաղանդավոր աշակերտների ձայնին ունկնդիր ուսուցիչը հիացմունքով նայում էր նրանց ու աղոթքի պես մրմնջում.

-Շնորհակալ եմ քեզնից, տե՛ր Աստված, որ ինձ ուսուցիչ ես կարգել այս շնորհաշատ երեխաների վրա:

Խնձորեսկցի տավարած Բախշու և Բոխչայի որդին դառնում է ուսուցիչ, դասավանդում Խանածախ գյուղում, հետո դառնում համալսարանական, լինում Բաքվում, Երևանում:

ԿԱՐՈՏՆԵՐԻ ՄԻՋՈՎ

Սկսվում է Հայրենական Մեծ պատերազմը: Ծանր վիրավոր Այվազյանը հայտնվում է Խարկով քաղաքի ռազմական հոսպիտալում, որտեղից էլ վիրավոր ձեռքով նամակ է գրում աշխարհում իր համար ամենասուրբ էակին:

«Մա՛յր, Աստված լսեց քո ձայնը և ինձ կենդանի թողեց, որ դու էլ ապրես ինձ համար: Մա՛յր, գիտեմ՝ որքան ես տանջվել, գիշեր-ցերեկ աղաչել Աստծուն, որ ես կենդանի մնամ, և ես հիմա կենդանի եմ: Հիշում եմ քեզ, մա՛յր, հիշում եմ մեր գյուղը, և քթիցս ծուխ է դուրս գալիս, աչքերս վառվում են արցունքներից: Ամեն րոպե, ամեն վայրկյան հիշում եմ քեզ, մա՛յր… Հիշում եմ՝ ինչպես դպրոցից տուն չէի վերադառնում: Գնում էի հեռու ձորերում ուտելու մի բան, սինձ, տոպ, կկվի փուշ գտնելու… Մթնում էր, ես դեռ ձորում էի, իսկ դու, Խաշխաշի ձորի քարափին կանգնած ,կանչում էիր. «Ասու՛ր, հե՛յ, Ասուր, ա՛յ անտեր-անտիրական բալա…» ,ու ինձ թվում էր, թե բոլոր ձորերը մորս պես կանչում են ինձ: Այդ կանչը, մա՛յր, մինչև հիմա էլ ականջներումս է»:

Թիկունքից ու աջ ուսից ծանր վիրավոր Այվազյանը երկու ամիս ավել պառկած է մնում Խարկովի զինվորական հոսպիտալում և այդ ընթացքում հասցնում է գրել տասը պատմվածք և հինգ նամակ: Նամակներն ուղղված էին մորը և եղբայր Սերգոյին: Նամակներից մեկում արձակագիրը գրում է.

«Կարոտել եմ մեր գյուղը, մեր գյուղի ձորերն ու քարերը: Հիշում եմ, շատ բան եմ հիշում: Հիշում եմ՝ ինչպես էին կռունկները վերադառնում Բաղդադի կողմից… Մեր երկնքի կապույտ ճանապարհի վրա նախշի պես էր նրանց երամը, և ես լսում էի նրանց ձայները, որոնց մեջ հոգնածություն կար և իրենց հողին հասնելու կարոտ… Այնեխուլի ձորը լցվում էր նրանց կարոտած ձայներով… Ամեն, ամեն օր մեր գյուղն ու նրա մարդիկ աչքիս առաջն են: Երևի հիմա Բչեցու ձորում ծաղկել են վայրի նշենիները, և արևը մայր մտնելուց հետո էլ ձորի լանջերը մնում են արևոտ… Հիշում եմ գյուղի թանձր գիշերները… Հիշում եմ՝ սեպտեմբերի երկրորդ կեսից ինչպես էր խելագարվում մեր լեռնաշխարհը… Ցերեկները ձորերը լցվում են մթին ամպերով ու լաց են լինում անվերջ հեռացող մի տարօրինակ ձայնով: Գիշերները այնպես պայծառ են շողում աստղերն ու լուսինը, ասես ամպեր չեն եղել ու չեն լինելու: Թվում է՝ մի խորունկ, արարող մտորումի մեջ է տիեզերքն այստեղ… Հիմա քայլում եմ այդ ամպերի միջով ու ինքս ինձ չեմ տեսնում: Շուտով կգամ, մա՛յր, քեզ ու իմ ամպոտ հրաշքները տեսնելու,

կգամ՝ ընդմիշտ ձուլվելու իմ մանկության ձորերին, կգամ մեր քարափի քարերը համբուրելու, սրտիս մեջ ամբարված կարոտներիս հետ զրուցելու»:

Ու Սուրեն Բախշիի Այվազյանը պատերազմից եկավ ստեղծագործական ծանր բեռներով, եկավ իսկական գրողի առաքելությամբ: Եկավ ու Զանգեզուր աշխարհի կարոտների միջով հայության առջև փռեց իր գրական մարգարիտները: Իր գրական վաստակի կարճ ժամանակաընթացքում գրողը ստեղծեց իր հետմահու կյանքի անմահությունը՝ դառնալով հայ գրականության նշանավոր դեմքերից մեկը: Այվազյանը գեղարվեստական դպրոցի և ոչ մի դասարանի ոչ մի ժամից չի բացակայել: Նրա կոչումը եղել է գրականությունը: Մոլեռանդ հավատացյալի նման միշտ ստեղծագործել է, հոգեկան իր դառնությունները և հիասթափությունները գիշեր-ցերեկ դատարկել ճերմակ թղթի վրա:

ԳՐՈՂԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Գրելը, ստեղծագործելը, աշխարհին, ժողովրդին իր խոսքն ասելու բուռն ցանկությունը եղել է նրա ապրած կյանքի իմաստը: Նա ավելի քան 50 տարվա գրական տառապալից աշխատանքի փորձով վաստակել է ստեղծագործական առատ հունձք, մի ամբողջ կյանք, ճշմարիտ ու ազնիվ գրականություն: Ամեն մի ճշմարիտ արվեստագետ իր գրած ու չգրած գրքերում ունենում է իր իդեալ հերոսը: Եվ այդ իդեալ կերպարի մեջ ամեն գրող փնտրում է իրեն: Սուրեն Այվազյանի իդեալ հերոսը իր ժողովրդին, նրա պատմությանը ,հնին ու նորին նվիրված մարդն է: Հաճախ է պատահում,որ ինչ որ գրողը չի կարողանում կյանքում իրականություն դարձած տեսնել, այդ ամենը իրողություն են դարձնում նրա հերոսները: Նրանք հայրենիքի փրկությանը զինվորագրված մարտիկներ են, քար ու քերծի կուրծքը ճեղքող շինարարներ, ջրանցք ու աղբյուր կառուցողներ, հանդ ու դաշտի անխոնջ մշակներ, գյուղի և քաղաքի հասարակ ու համեստ մարդիկ: Այվազյանը իսկական, ճշմարիտ ու հավատավոր գրականության ներկայացուցիչ է: Նա հաստատում է, որ այն, ինչ արտահայտում է ժողովրդի շահը, ինչ հավատ է ներշնչում ընթերոցողին ու դառնում համոզմունք, հենց իսկական գրականություն է: Այվազյանը նաև սիրո ու կենսափիլիսոփայության մեծ վարպետ է…

«Ես երազում եմ աղմուկից հեռու մի խաղաղ խրճիթ: Մի փոքրիկ սեղան, մի հին մահճակալ,խրճիթիս առջև՝ ծիրանի մի ծառ, ու ծառից վերև՝ մի կտոր երկինք:Եվ դու՝ իմ կողքին՝ հրեշտակի պես…Մատներիդ զարդը ոսկի չլիներ: Ոսկու փոխարեն քո կրծքի վրա արևը շողար: Մոմի պես բարակ մատներդ շոյեր մազերս սևսաթ, իսկ շուրթիդ վրա՝մաքուր ու անբիծ,թրթռար սիրո մի անկեղծ համբույր: Եվ ինչ էլ լիներ, թող շիտակ լիներ:Ու հավատ լիներ իրար նկատմամբ, անսահման հավատ՝ ապացուցելու, որ երջանիկ լինելու համար շատ ու քիչ չկա:Կա միայն հոգի, կա միայն կարոտ, ու կա անկեղծ սեր…Մեկ էլ երազանք»:

Այվազյանը նաև մեր օրերի համար է: Նրա հերոսները նաև այսօրվա մարդիկ են ու չեն մեռնի այնքան, որքան գոյություն ունի Հայաստանը, որքան կա ու կապրի հայ ժողովուրդը: Այվազյանի կերտած Իսրայել Օրին բոլոր ժամանակների համար է՝ որպես հայ ժողովրդի ազատագրության խորհրդանիշ: Իսրայել Օրու թոռան թոռներն էին, որ նրա անունով ազատագրեցին Ղարաբաղը: Օրու ոգին էր առաջնորդում նրանց: Այվազյանը հոգով ու մտքով միշտ իր հայրենի եզերքների հետ էր: Ամեն անգամ գալիս էր Զանգեզուր, ինչպես

հավատացյալն է մտնում եկեղեցի: Նա նշխար-նշխար հավաքում էր զանգեզուրցու իմաստուն զրույցները և դրանց նոր շունչ ու ոգի հաղորդում՝ այդ բոլորի մեջ ծրարելով իր սերն ու կարոտը: Այդպիսի անզուգական կտավների վրա Այվազյանն ստեղծեց զանգեզուրի մարդկանց բազմաթիվ կերպարներ, որոնք բոլորն էլ իրենց հողը, իրենց հայրենիքը, իրենց արհեստը սիրող ու անսահման բարի ու բարեգործ մարդիկ են: Որմնադիր Պատվականը որոնում, գտնում է Ակնաղբյուրի ակունքը և կավե փողրակներով ջուր բերում գյուղամեջ: Վարպետ Անանիան իր վեց եղբայրներով պատռում է կարծր ժայռի կուրծքը,ճանապարհ բացում գյուղից դեպի արտաքին աշխարհը: Մեծահարուստ Փանդունց Լալազարը Որոտանի վրա կամուրջ է կառուցել և նվիրել մարդկանց: Նույնիսկ ընչազուրկ Գաբին, որ ոչ մի արհեստ չի ունեցել, ամբողջ կյանքում հանդամիջյան ճանապարհների վրա ընկուզենիներ է տնկել, որ հոգնած ճամփորդները նրանց շվաքի տակ հանգստանան:

Այվազյանի հուշերում հեռվում առկայծող ճրագների նման պեծին են տալիս խնձորեսկցի շատ անուններ, որոնցից շատերը խտացված կերպարներ են՝ իրենց տարբերիչ գույներով, համով ու հոտով, մարդկային ուրույն հոգեբանությամբ: Տասնյակ կերպավորումների միջոցով արձակագիր Այվազյանը կարողացել է ստեղծել ու արտահայտել մարդկային խոր դրամաներ, մեծ ցավեր ու տառապանքներ, ինչպես նաև երազներ ու կարոտներ: Եվ այդ հերոսներից յուրաքանչյուրը պատրաստ է իր տառապանքի միջից մարդկային ականջին այնպես շշնջալ. «Եվ, այնուամենայնիվ, արժե ապրել, թեկուզ մեծ տառապանքներից ծնված փոքր երջանկությամբ»: Պատահական չէ արձակագրի հերոսներից մեկի շուրթերից հնչած բացականչությունը. **«Հացդ ցամա՛ք կեր, բայց հոգիդ արդա՛ր պահիր»**: Ահա արձակագիր Այվազյանի հավատամքը: Սա ոչ միայն իր հերոսի, այլև հենց *Այվազյան* մարդու ինքնախոստովանությունն էր: Այդպես էլ նա ապրեց այս աշխարհում ու անժամանակ հրաժեշտ տվեց իր երկրային կյանքին:

ԿՏԱԿ

_Ես որդու սիրով եմ սիրել այդ հողը և դրա հմայքով եմ ճանաչել հմայքը հողի և մարդու: Ես ծնվել եմ այդ հողից և դառնալով մի բուռ հող՝ կուզեմ խառնվել այդ հողին, որ չպակասի նրանից մի բուռն աշխարհում: Դրա համար եմ կտակում՝ ուր էլ մեռնեմ աշխարհում, ինձ կթաղեք Զանգեզուրում...

1981 թվականի մայիսի 19-ին դադարեց բաբախել նրա միշտ անհանգիստ սիրտը: Հայաստանը մի լավ, տաղանդավոր գրող կորցրեց:

Զանգեզուրը դարձավ սգվոր՝ կորցնելով իր ազնիվ հպարտություններից մեկին: Լաց եղան ծննդավայր Խնձորեսկի առուները, հողը տնքաց ցավից, Հին Խնձորեսկի մռայլ ձորը ավելի մռայլվեց ու Բոխճա մայրիկի գերեզմանային ձայնով, որպես ցավի, տառապանքի ու բողոքի ճիչ, ահասարսուռ գոչեց. «Ասուր, հե՛յ, Ասուր, ա՜յ անտեր-անտիրական բալա, այդ ի՞նչ արեցիր»: Մեծ արձակագիրը իր կտակի համաձայն թաղվեց իր հայրենի գյուղում՝ իր կառուցած տան բակում՝ դեպի լուսավոր հորիզոնները նայող բարձունքի վրա: Գրողն իր կամքով ու ցանկությամբ իր համար պանթեոն դարձրեց հայրենի գյուղը և խառնվեց այն հողին, որտեղից հառնել էր ինքը: Մահից հետո անգամ նա չհեռացավ իր ակունքներից, որ միշտ իր նախնիների հիշատակների հետ մնա ու ապրի հետմահու կյանքով՝ որպես մեծատաղանդ զանգեզուրցի:

Այո՛, **Զանգեզուրը** եղել է **Այվազյանի** կյանքի դասագիրքը, խոհերի մատյանը, հոգու ու սրտի աղոթարանը: Նա ուր եղել է, հայրենի Զանգեզուրը տարել է իր հետ: Նրա ստեղծագործական կյանքի ուղեկիցներն են եղել **Որոտանն** ու **Վարարակնը, Լաստի խութն** ու **Թագավորի կալը, Մթնաձորն** ու **Ծլանի ձորը, Կյորեսի ժայռերն** ու **Դաղալուն քերծը, Օխտը աղբյուրն** ու **Ակնաղբյուրը:** Նրա գրական երթուղու մշտավառ փարոսը եղել է գեղարվեստական խոսքի ուսուցչապետ **Ակսել Բակունցը**, իսկ գեղարվեստական նավի ճամփորդներն են եղել **Գարեգին Սևունցը, Սերո Խանզադյանը, Համո Սահյանը**: Նրա ունկերը լիքն են եղել **Աշոտ** և **Արամ Սաթյանների**, աշուղներ **Մաղու, Աթայի, Թառայունու** և **Շափաղաթի** երգերով: Նա ինքնամոաց ունկնդիր է եղել **Ղավալ Բաղու** ու **վարպետ Օհանի** զգայացունց մեղեդիների և նաև՝Սյունյաց թագուհի **Տաթևիկ Սազանդարյանի** աստվածատուր ձայնի:

ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ «ԿԱ ԵՎ ՀԵՏՄԱՀՈՒ ԿՅԱՆՔ»

Եթե մի հրաշքով այստեղ հավաքվեին Սյունյաց աշխարհի տաղանդավոր մարդիկ, ապա երևի թե այսպիսի մի զրույց տեղի կունենար…Այվազյանը կառաջնորդեր Սյունյաց մեծերին դեպի իր հայրենի օջախ՝ մեկ-մեկ ողջունելով ու ներկայացնելով միմյանց.

Այվազյան- Եկե՛ք տանեմ, իմ ծննդավայր... Եկե՛ք տասը դարերի այս ոտնահետքերով, որ մեռնում են լեռնային մանրածաղիկների ու զառ խոտերի մեջ, մտնենք տասը դար ապրած Խնձորեսկ և փորձենք կենդանացնել թեկուզ նրա տասը օրը:

Սիրելինե՛րս, հոգաչափ շնորհակալ եմ, որ այսօր իմ հյուրն եք.

Իմ մեծ վարպետ, խոսքի արքա **Ակսել Բակունց**…

Իմ գրչընկերնե՛ր, իմ սրտամոտ բարեկամնե՛ր **Գարեգին Սևունց, Համո Սահյան, Սերո Խանզադյան…**

Իմ մանկության ընկերնե՛ր, տաղանդավոր **Սաթյան եղբայրներ**…

Գույների վարպետ **Հենրիկ Սիրավյան**…

Եվ վերջապես, հայ երգի թագուհի **Տաթևիկ Սազանդարյան…** և անզուգական **Գուսան Աշոտ:**

Ես ամբողջ աշխարհն եմ սիրում: Նվիրական ու հարազատ է ինձ Տագորի Բենգալիան: Շրջել եմ Շիրազի վարդաստաններում, ուր Հաֆիզն իր գազելներն է հյուսել՝ տալով սոխակի թովչանքն ու վարդերի բույրը: Գյոթեի երկրից սրով են եկել իմ դեմ, ես իմ արյունով եմ պաշտպանել նրա երգը: Ինձ հարազատ է ամբողջ աշխարհը, բայց թե մեռնեմ էլ Բոհեմայի անտառներում, ինձ կթաղեք Զանգեզուրում:

Համո Սահյան - Ես ծնվել եմ այստեղ—

Զանգեզուրի զարմիկ
Բարձունքների վրա,
Վերևից եմ տեսել
Արեգակի անեղծ
Ծնունդն ամենօրյա,
Վերևից եմ տեսել
Ամենօրյա կարմիր
Հոգեվարքը նրա:

Այո՛, հրաշք է մեր Զանգեզուրը, Սուրե՛ն, ե՛ս էլ չեմ կարող ուրիշ տեղ մնալ.

-Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,

Ախր ուրիշ տեղ Հորովել չկա

Ախր ուրիշ տեղ ձյունի մեջ արև

Եվ արևի մեջ այսքան ձյուն չկա՜…

Չէ՞, Բակո՛ւնց…

Բակունց – Արևի մեջ ձյու՜ն… Հրաշալի է. հուշերիս գիրկն ընկա…

Ձմեռն էր լավ: Աշխատանք քիչ կար. տավարը գոմումն էր, խոտն ու դարմանը՝ մարագում:

Պապս ո՛չ նստում էր դարպասի քարին, ո՛չ էլ պառկում բակի թախտի վրա: Պապս քուրսու մոտից չէր հեռանում:Նա սովորություն չուներ գյուղի հրապարակը գնալու: Քուրսու մոտ կնստեր, բրդե շալը ուսին կգցեր ու կմտմտար: Երբեմն ինքն իրեն կժպտար բարի և անչար մարդու ժպիտով ու երբեմն էլ զրույցներ կաներ…

Գուսան Աշոտ – Հո՜վ սարեր, մո՜վ սարեր,

Մանկությունս ե՛տ բերեք…

Համո Սահյան – Իմ նախնիներն այստեղ

Ապրում էին, մեռնում

Ապրում էին աղքատ,

Մեռնում հարուստ,

Գրաստ էին բառնում,

Գրաստ էին դառնում,

Ու վաստակում մի կերպ

Հաց ու ապրուստ:

Կծիկ կծիկ սարեր ,

Կիրճեր՝ պարան-պարան,
Շարան-շարան ժայռեր,
Քարափ ու քերծ,
Վերհուշերս կրկին,
Ա՜խ ինձ այնտեղ տարան,
Լեռնաշխարհը տարան
Այն երկնամերձ…

Սերո Խանզադյան – Լեռնե՜ր, լեռնե՜ր… Մեկը մյուսին խեղդող, մեկը մյուսին վեհացնող լեռներ: Նրանց լանջերին հնձած լավաշ-լավաշ սարեր կան, աշնանային ծիրանի գոտիներ և սև ցելեր: Արտերի վրա ամռան արևի քաղցրության պես ծորում, սփռվում էր մի հորովել…

Խնձորը ծոցին, տղա՛,
Ճիպոտը լուծին, տղա՛,
Հո՛ արա, հո՛…
Հը՛, Սուրե՛ն, քո հուշերը քեզ ու՞ր տարան:

Սուրեն Այվազյան – Տափակ, մաքուր, ավլած կտուր, մի անկյունում՝ կարմիր, կիսած կճուճ, որից պալան-պալան ծուխ է ելնում, կապույտ ծուխ…

Մարդիկ՝ դիք փափախներով, բայց քրքրված, երեխաներ՝ անշեք փոխաններով և կորովի, անկոճակ բլուզներով, բոկոտն, մերկ, բայց առողջ, աշխույժ, աղմկարար: Թնդուն հայհոյանքներ, ձիարշավներ, յոթը պորտի մեջ բարեկամություն, լուռ ծնունդներ,աղմկալից թաղում…

Սա մեր գյուղն էր, հիշու՞մ ես, Տաթևի՛կ

Տաթևիկ Սազանդարյան – Այո՛, ծնվելով Խնձորեսկում, իմ երակներում կրելով խնձորեսկցու արյուն՝ դարձա Սովետական Միության ժողովրդական արտիստուհի:Ապրելով մայրաքաղաքային փափուկ կյանքով՝ իմ երազներում քնած թե արթմնի շատ եմ քայլել Ներքին թաղով, Ակն տանող ճանապարհով: Քթիս տակ քաղցրահնչյուն նվագներ նվնվալով՝ հասել եմ Ծտի մահլան, աչքերով շոյել Փրթոս տանող ճանապարհը: Իմ կյանքում նվաճել եմ

շատ նշանավոր բեմեր, հմայել իմ ձայնով հանդիսատեսներին: Բայց իմ երազանքներում ես հաճախ եմ Խնձորեսկի իմ երևակայած ամֆիթատրոնում հազար-հազար անգամ հնչեցրել մեր հայրենակից Սաթյանի երգերը: Բայց այն զգացմունքը, որ ես երգում էի «Դավիթ Բեկ» օպերայում Թամար թագուհու դերը, վեր էր ամեն ինչից. չէ՞ որ ես նրանց ճանապարհում էի Հայաստան, որպեսզի Մխիթար Սպարապետի հետ ձեռք-ձեռքի տված՝ մտնեն այս ձորերը ու փրկեն այն:

Սևո՛ւնց, դո՛ւ ասա, կարելի է այս գյուղը չսիրել, այս լեռնաշխարհին չսիրահարվել…

Գարեգին Սևունց – Աշխարհի շատ երկրներում եմ եղել, դեգերել եմ բազմաթիվ քաղաքներում, ճանաչել եմ շատ ու շատ ժողովուրդների, հանդիպել շատ նշանավոր մարդկանց ու նորից բռնել իմ ծննդավայրի ճանապարհը:

Սա իմ աշխարհն է, իմ լեռները: Իմն են այստեղի սառնորակ աղբյուրները, երկնքում թռչող հավքերը: Այստեղ ամեն ինչ, ամեն քար ու արահետ ասես լեզու առած պատմում է տխուր անցյալի մասին: Մի պահ թվում է, թե ծանոթ ճամփին երևալու է իմ բարի, աննման տատը՝ կարճ ճիպոտը ձեռքին, ջորին քշելիս: Ինձ տեսնելուն պես գիրկն է առնելու, ապա ձեռքը տանելու է արծաթյա բոժոժներով զարդարված կապայի գրպանը և կարմիր խնձոր, տանձ կամ մի բուռ ընկույզ է հանելու՝ ասելով.

- Ա՛ թուլա, դե խի ես լաց լինում, հեսա եկել եմ, էլի…

Իմ չքնա՛ղ, իմ անմոռա՛ց մանկություն:

Սերո Խանզադյան-Ես հպարտանում եմ մեր լեռնաշխարհով: Նրա խորհրդավորությունը հասկանալու ճիգով նայում եմ հեռավոր մշուշներին, սարերի գագաթներին նստած կապույտ երկնքին, ամպերին, որոնց վրա մարմրում են արևի վերջին շողերը… Տատիս հիշեցի. իմաստուն կին էր: Նա միշտ ասում էր:

- Աղքատին պետք է օգնել… Ունևորը պետք է չունևորին օգնի:Բայց օգնի յուղ տալով, շաքար տալով, հաց տալով, ոչ թե օգնի ավելուկով, բոխիով: Դրանցից մեր սարերն ու ձորերը լիքն են, թո՛ղ գնան, հավաքեն: Ասում էր՝ ինձնից ձեզ խրատ. աղքատը որ մեղր էլ ուզի, տվե՛ք, իսկ էն բաները, որ սար ու ձորում լիքն են, և ինքը չունի, չտա՛

Գարեգին Սևունց – Ես՝ հին ու զառամյալ այս ձորի երեխաս, մանուկ հասակից կախարդանքի ուժող ահա քայլում եմ դեպի Հին գյուղի Ներքին թաղը՝ չգիտեմ ինչու՝ կարծելով, թե ահա ուր որ է կլսեմ երգահան Սաթյանների թովիչ, հոգեզմայլ մեղեդիները, ժողովրդական արտիստ

Տաթևիկ Սազանդարյանի անուշ ձայնը: Քայլում եմ դեպի «Ինի մանուկի» աղբյուրը, դեպի «Շռանի գլուխ», և թվում է, թե ահա ինչ-որ մեկը կսկսի արտասանել Սուրեն Այվազյանի մի քիչ թախծոտ, բայց սրտառուչ ու սրտաբուխ պատմվածքները:

Աստվա՜ծ իմ, արարչական, ստեղծագործական ի՜նչ ուժ ունի այս ամեհի ձորը:

Տաթևիկ Սազանդարյան – Այդ ի՞նչ ես արարում, Հենրի՜կ Սիրավյան. դու քո զգացողությունների մասին չե՞ս զրուցելո. լուռ ես…

Հենրիկ Սիրավյան – Ես իմ ապրումները արտահայտում եմ ոչ թե բառերով, այլ գույներով: Իմ վրձինը իմ սրտի զգացածը փոխանցում է կտավին: Ես քար սիրող մարդ եմ, քարը իմ ոգեշնչումն է: Քարերի աշխարհ Զանգեզուրը ինձ ուժ է տալիս, ներշնչում: Ես էլ սրտիս բոլոր թելերով այստեղ եմ՝ Խնձորեսկում. Չէ՞ որ սա նաև իմ պապերի երկիրն է… Ես՝ գույներով, իսկ Սաթյանները երևի նոտաներով են արտահայտում իրենց կարոտը… Այնպես չէ՞, բարեկամնե՛րս…

Արամ Սաթունց – Իհարկե այդպես է: Մեր ստեղծագործությունները մեր սիրո ու կարոտի ծնունդն են: Մեր ելևէջները մեր հոգու խորքերում նախ թևածում են Զ

անգեզուր աշխարհում և ապա՝ երկրի տարբեր ծագերում:

-Իմ հայրենի՜ Զանգեզուր,

Ինձ հետ ես դու ամենուր.

Քո ջերմ սիրով եմ ապրում,

Քո կարոտն է մեր սրտերում…

Աշոտ Սաթյան - «Մարտիկի երգս» իմ անծիր կարոտի կանչն է: Կարոտը հալածում է թե՛ մարտի դաշտում կռվող մարտիկին, թե՛ սահմանապահ զինվորին, թե՛ բանվորին, թե՛ բժշկին, թե՛ նկարիչ – երաժիշտներին, բոլոր բոլորին, ովքեր հեռու են հայրենի բնաշխարհից, հարազատ միջավայրից.

- Թռչեի՜ մտքով տուն,

Ուր իմ մայրն էր արթուն,

Տեսնեի՛ այն առուն

Կարոտով ես անհուն, որ ամեն մի գարուն ջրերով վարարուն,

Կարկաչում է սարերում:

Սուրեն Այվազյան– Ա՛խ, հարազատնե՛րս, լքում ենք այս պապական հողերը ու փախչում… Բայց ես կմնամ այստեղ ու կքայլեմ մեր հանդերի ճամփաներով, կածաններով, որ չծածկվեն խոտով, որ անտեր չմնան մեր հողերը, որ այս լեռնաստանում հավետ կարկաչի մեր բարբառը… Այնպես չէ՞, Բակո՛ւնց:

Բակունց – Մե՛ր բարբառը… Ի՛նչ չքնաղ լեզու է մեր բարբառը: Չուտես, չխմես, այլ միայն այդ լեզվով խոսես, կամ լսես, թե ինչպես է այդ քաղցր հնչյուններով խոսում Մինա բիբին: Ասես ոչ թե խոսում, այլ ճախարակի առաջ բարակ երգ էր ասում, և բառերը նստում էին, ինչպես փափուկ մալանչներ: Իսկ Աթա ապերը երբ կբարկանար, այնպես մի «ըմբո՛» կասեր, որ մեղրաքերծը կդրնգար.

-Իրանի Թուրանում չկա քեզ բարաբար,

Քեզ բարաբար, իմ Զանգեզո՛ւր…

Աթա ապերը կարտասաներ երկու տող «Գորիսի գովքից», բայց այնպես կասեր, որ իբրև իջնում էր խոր ձորերը և բարձրանում էր բարձր լեռները, և լեռնային քամու նման լեզուն պտույտ է անում դեպի երկինք:

Այդքան գեղեցիկ ու հնչեղ էր մեր լեզուն: Նա մի չքնաղ գորգ է, նախշերով ու վարդ ծաղիկներով մի հին գորգ: Ու ինչքան հնանում, մաշվում, այդքան շքեզանում էին այդ գորգի գույները. պատահում էր, որ ՄԻնան այդ հին գորգը տանում էր գետը և լվանում էր… Մինան լաց էր լինում, և նրա հետ լաց էր լինում Կյորեսի լեզուն:

Սուրեն Այվազյան – Ես որդու սիրով եմ սիրել այս հողը և սրա հմայքով եմ ճանաչել հմայքը մի պատառ հողի և ամբողջ աշխարհի: Ես ծնվել եմ այս հողից և դառնալով մի բուռ հող՝ կուզեմ խառնվել այս հողին, որ չպակասի նրանից մի բուռ հողն աշխարհում… Դրա համար եմ կտակում, դրա համար եմ թողնում ձեզ, հայրենակիցնե՛ր իմ բարի, ուր էլ մեռնեմ աշխարհում, ինձ կթաղե՛ք Զանգեզուրում…

Համո Սահյան– Դու սարերի մեջ ու ձորերի մեջ,

Ամենանորը դու նորերի մեջ,

Ու հների մեջ ամենահինը…
Դու իմը, իմը, ամենաիմը…
Իմ Զանգեզո՛ւր.

Աշո՛տ, մի բան երգիր:

Գուսան Աշոտ – Հայոց երգի խորո՛ւնկ ձորեր,
Ձեզ հազար տաղ պիտի ասեմ,
Բույրով լցված ծաղկանց ծովեր,
Ձեզ հազար խաղ պիտի ասեմ, պիտի ասեմ…

Տաթևիկ Սազանդարյան – Եկե՛ք չմոռանանք, որ այստեղ՝ Խնձորեսկում, հավաքվել ենք Սուրենի հրավերով: Ուստի առաջարկում եմ խմել մեր հայոց աշխարհի և նրա գրկում գտնվող այս գողտրիկ անկյունի կենացը:

Սուրեն Այվազյան– Ես Ձեզ կհյուրասիրեմ Այնեխուլի այգիների անարատ գինով, որն ասես մեռոն լինի…

Համո Սահյան – Կենա՛ցդ, Ասու՛ր, բոլորիս կենացը: Իրոք որ,

Կա և հետմահու կյանք…

Սերո Խանզադյան – Աշու՛ղ Աշոտ, ծաղկեցրու՛ մեր կենացը քո անմահ երգով.

Գուսան Աշոտ – Սյունյաց սարեր…

Գուսան Աշոտ ,սյունյաց հողը անարատ է,

Չարի սերմը բույն չի դնի, անարմատ է,

Մարդ արծիվ է, լեռնածին է, հրահատ է,

Հազար հողմեր ձեզ չեն մաշի, սյունյաց սարեր...

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը, կարծում եմ, մի փոքր ավելի ճանաչելի ու հասկանալի դարձրեց Սուրեն Այվազյան-գրողին և մարդուն: Ճանաչելի դարձրեց նրա աշխարհը, հասկանալի դարձրեց ստեղծագործական կյանքի ակունքները: Նրան տեսանք Զանգեզուր աշխարհի ֆոնին:

Այվազյանը որդիական ջերմ սիրով է սիրել մեր բնաշխարհը. նա այդ սերը ժառանգել է Բակունցից և Սահյանի, Խանզադյանի, Սաթյանների, Գուսան Աշոտի ու մյուսների հետ խնամքով փոխանցել մեզ…

Մենք պարտավոր ենք այդ սերը կրկնապատկել ու եռապատկել և ներարկել սերունդներին…

Ու մենք կունենանք հայրենաճանաչ, հայրենասեր և հայրենատեր կարողունակ քաղաքացիներ՝ պատրաստ պաշտպանելու, շենացնելու և ծաղկեցնելու **Հայաստանը** և նրա ողնաշարը՝ **Սյունիք- Զանգեզուրը**:

Կարծում եմ՝ Այվազյան գրողին դեռ պետք է անդրադառնանք…

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Այվազյան- ԱՍՈՒՐ, ՀԵՅ ԱՍՈՒՐ
2. Ս. Այվազյան-ԽՈՐԱՁՈՐՑԻՔ
3. .Ս. Այվազյան-ԿԱ ԵՎ ՀԵՏՄԱՀՈՒ ԿՅԱՆՔ
4. Ս. Այվազյան-ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ
5. .Ս.Այվազյան –ԳԱՐՈՒՆՍ ՁՅՈՒՆԵՐԻ ՏԱԿ
6. .Ա. Ծատուրյան-ՄԵՐ ԱՅՎԱՋՅԱՆԸ
7. .Ա. Բակունց-ԿՅՈՐԵՍ
8. .Ս.Խանզադյան –ԵՐԿԵՐ
9. Հ. Սահյան- ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
10. Գ. Սևունց-ԵՐԿԵՐ
11. Գուսան Աշոտ- ԵՐԳԱՐԱՆ

Одно приложение для всех ваших нужд Word, Excel, PowerPoint и PDF. Получить Приложение Office: https://aka.ms/officeandroidshareinstall